ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/143 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր **26 օգոստոսի 2026թ.**

2026թ. օգոստոսի 24-26-ը, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4, հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ սննդամթերքի ձեռքբերման թիվ ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/143 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ս. Սարգսյան՝	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի գլխավոր մասնագետ,
Թ. Աբգարյան՝	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետ,
Ի. Սարգսյան՝	Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի առաջատար մասնագետ,
Վ. Բաղդասարյան՝	Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Սարգսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր՝Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մուրադյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. օգոստոսի 24-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 15:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Հաց լավաշ	6,500.00
2	Հաց ամբողջահատիկ	190,000.00
3	Հաց սպիտակ	350,000.00
4	Մեղր	7,000.00
5	Կաթնաշոռ	26,000.00
6	Մածուն 2.5%	36,000.00
7	Մածուն 3.2%	32,000.00
8	Պանիր չանախ	54,000.00
9	Պանիր լոռի	60,000.00
10	Հավկիթ	80,000.00
11	Թթվասեր 10 %	90,000.00
12	Ցորենի ալյուր	4,000.00
13	Բրինձ	36,000.00
14	Ոսպ	20,000.00
15	Սիսեռ	8,000.00
16	Բլղուր	2,400.00
17	Պահածոյացված կանաչ ոլոռ	52,500.00
18	Եգիպտացորեն	20,000.00

19	Պահածոյացված եգիպտացորեն	22,500.00
20	Ոլոռ	4,000.00
21	Մակարոնեղեն	24,500.00
22	Ցորենաձավար	9,000.00
23	Կարմիր լոբի	22,500.00
24	Հաճարաձավար	13,500.00
25	Շաքարավազ	27,000.00
26	Վարսակի փաթիլներ	44,000.00
27	Հնդկաձավար	44,000.00
28	Վարսակի թխվածքաբլիթ	105,000.00
29	Ջեմ	45,000.00
30	Պաքսիմատ	1,600.00
31	Աղացած կարմիր պղպեղ	1,350.00
32	Կակաո	5,250.00
33	Դարչին	550
34	Վանիլին	400
35	Փխրեցուցիչ	800
36	Սոդա	250
37	Համեմունքներ	1,000.00
38	Տոմատի մածուկ	12,000.00
39	Արևաձաղկի ձեթ	120,000.00
40	Աղ,կերակրի,մանր	2,400.00
41	Կանաչ/կարմիր պղպեղ	30,000.00
42	Հազար	40,000.00
43	Սպանախ	34,000.00
44	Սալոր	24,000.00
45	Խաղող	6,000.00
46	Ելակ	30,000.00
47	Դեղձ	20,000.00
48	Դդմիկ	14,000.00
49	Չամիչ	36,000.00
50	Չիր	58,500.00
51	Կանաչ լոբի	22,500.00
52	Բրոկոլի	52,500.00
53	Կաթ 1.7 %	60,000.00

54	Կաթ	180,000.00
55	Համեմ	14,000.00
56	Մաղադանոս	15,000.00
57	Սմբուկ	7,000.00
58	Լոլիկ	27,000.00
59	Վարունգ	31,500.00
60	Դդում	10,000.00
61	Կաթ 2.5 %	120,000.00
62	Կարմիր սոխ	7,500.00

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. օգոստոսի 26-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. օգոստոսի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Սարգսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Թ. Աբգարյան _____

Ի. Սարգսյան _____

Վ. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Վարդանյան _____